# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԱԳՆ-ՄԱԾՁԲ-16/12

ք. Երևան «16» դեկտեմբեր 2022 թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Բ. Սահակյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՄԱՐԻԱՄ ԱԲԳԱՐՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ Ա/Ձ-ն, ի Ա/Ձ Մ. Աբգարյանի,(այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 50728557 (հիսուն միլիոն յոթ հարյուր քսանութ հազար հինգ հարյուր հիսունյոթ) ՀՀ դրամ :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն

ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **9** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2022թ. դեկտեմբերի 12-ից ծագած հարաբերությունների վրա:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **Պատվիրատու** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>Երևան 0010, Վ.Սարգսյան 3<br>ՀՎՀՀ 02527728<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 90001109733<br>Գլխավոր քարտուղար<br>Բ. Սահակյան<br>_____<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ՄԱՐԻԱՄ ԱԲԳԱՐՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ Ա/Ձ<br>ք. Երևան, Կենտրոն Վրացյան փ. շենք 84/1 բն.34<br>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 19300293242700<br>ՀՎՀՀ 37493946<br>Ա/Ձ՝<br>Մ. Աբգարյան<br>_____<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված N 1*
*«16» դեկտեմբեր 2022 թ. կնքված*
*ԱԳՆ-ՄԱԾՁԲ-16/12 ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |

| | ը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 79111200/2 | «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» չորրորդ գլոբա ֆորումի շրջանակներում<br>**Բեմի կահավորում ձայնային, լուսարձակման նկարահանման աշխատանքներ**<br>1. Բեմահարթակ և հատակի ծացք<br>2. ԼԷԴ էկրաններ 14 քմ<br>3. Պաստառ և կոնստրուկցիա 5*3 1 հատ, 2.5*3 2 հատ<br>4. Մոնիտոր Հեռուստացույց 2 հատ<br>5. Տեսավահանակ և ինժեներ 2 հատ<br>6. Ալյումինե Կոնստրուկցիա Ֆերմա 2 հատ<br>7. Թարգմանչական սարքավորումներ<br>8. Թարգմանիչ 2 հոգի<br>9. Համերգային լուսարձակներ BEAM 10 հատ<br>10. Համերգային լուսարձակներ WOSH 15 հատ<br>11. Համերգային լուսարձակներ LED BAR 20 հատ<br>12. Համերգային լուսարձակներ PROFIL LIGHT 4 հատ<br>13. Ձայնային Համակարգ NEXO 15 Կվ<br>14. Հնչյունային ռեժիսոր<br>15. Լուսավորող<br>16. Բազկաթոռներ և սեղաններ 5 հատ<br>17. Բազմատեսախցիկ նկարահանում և ուղիղ եթերի տրամադրում և ԶՈՒՄ կոնֆերանսի ստեղծում<br>18. Հաղորդավար 2 հոգի<br>19. Ծաղկային ձևավորում և 5 հատ ծաղկեփունջ<br>20. Համերգային լուսարձակներ 20 հատ<br>21. Երաժշտախմբի տեխնիկական պահանջների ապահովում<br>22. Լուսավորող<br>23. Սրահի վարձակալություն Երաժշտախումբ<br>**Նախասրահ՝ Պատվիրակությունների դիմավորում**<br>24. Պաստառ և Կոնստրուկցիա 2 հատ 4*3 մ<br>25. Պաստառ և Կոնստրուկցիա<br>26. Գոտիավորման համար 5 հատ 1,5*2մ<br>27. Դիմավորման Սեղան/ՌԵՍԵՊՇՆ/<br>28. Մեդիա Կենտրոնում Պաստառ<br>29. Օրվա Խորհուրդով 3*3<br>30. Հարցազրույցների Գոտիում<br>31. Պաստառ օրվա Խորհուրդով 3*3<br>32. Հարցազրույցների Գոտիում<br>33. Բազկաթոռներ և սեղան<br>34. Հարցազրույցների Գոտիում<br>35. Արգելափակոցներ 10 հատ*7000 ԴՐ<br>36. Հոսանքի Գեներատոր<br>37. Դիսպենսեր Ալկոգել 2 հատ<br>38. Մալուխի Անցուղիներ 20 հատ<br>39. Բեռնափոխադրումեր<br>40. Սննդի ապահովում (Լրագրողներ)<br>**ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ**<br>41. Գրիչ լոգոտիպի 270 հատ<br>42. Նոթատետր a5 տպագրություն<br>43. Կազմի վրա 260 հատ<br>44. Նոթատետր կաշվե տպագրության կազմի վրա 15 հատ<br>45. Էկո պայուսակ կտոր հաստ 30սմ. 40 | դրամ | 50728557 | 1 | Ք.Երևան | 12-13.12.2022թ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | սմ. երկկողմանի տպագրություն 260 հատ<br>46. Թղթե պայուսակ a3 երկկողմանի տպագրություն 50 հատ<br>47. Գրքույկ՝ ծրագիր a5 20 թերթ 250 հատ<br>48. Կրծքանշան 250 հատ<br>49. Բրենդավորված բաժակներ 50 հատ<br>50. Բրենդավորված շապիկներ անձնակազմի համար<br>51. Համերգի ծրագիր a5 300 հատ<br>52. Հրավիրատոմսերի պատրաստում 300 հատ<br>53. Անցաթղթերի թվաինացում 300 հատ և հավելվածի ստեղծում<br>54. zoom բաժանորդագրություն 1 տարի<br>55. Նոր բեյջերի տպագրություն a5 լամինացված 400 հատ<br>56. Նվագախմբի և երգչախմբի սննդի ապահովում 55 հոգի<br>**ՆՎԵՐՆԵՐ ԵՎ ՏՊԱԳՐԱԿՈՒԹՅՈՒՆ**<br>57. Բրենդավորված Տերմո Բաժակներ 250 հատ<br>58. Նվերներ 40 հատ<br>59. Նվերներ 10 հատ<br>60. Բեյջեր Լամինացված 500 հատ<br>61. Օրվա Օրակարգ 400 հատ<br>62. Հաշվետու գիրքի տպագրություն 500 օրինակ<br>63. Դիզայներ<br>64. Այլ ծախսեր<br>65. Լուսանկարիչ 2 օր<br>66. Կորդինատոր 2 օր<br>67. Մատենադարանի սրահների վարձակալություն<br>68. ՈՒղիղ եթերի ապահովման վճար<br>69. Ինտերնետ մալուխի անցկացման և օպտիկայի տրամադրման գումար<br>**Սննդի սպասարկում**<br>70. Ֆուրշետ Կոնֆերանսի Ընդմիջման Ժամանակ 250 հոգի<br>71. Սուրճի Ընդմիջում 1-ին օր 2 անգան,<br>72. Սուրճի Ընդմիջում 2-րդ 1 անգամ<br>73. Ֆուրշետ և Գինի՝ համերգային ծրագրից հետո 250 հոգի<br>74. Կոկտելի Սեղանների վարձակալություն 15 հատ, 2անգամ<br>75. Ընթրիք Ռեստորանում 100 հոգի<br>76. Երաժշտական եռյակ Վահագն և ընկերներ<br>77. Զայնային և լույսային սպասարկում<br>78. Ընթրիք «Մեգերյան կարպետս» կենտրոնում 50 հոգի | | | | | |

| | |
|---|---|
| **Պատվիրատու**<br>ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>Երևան 0010, Վ.Սարգսյան 3<br>ՀՎՀՀ 02527728<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 90001109733<br>Գլխավոր քարտուղար<br>Բ.Սահակյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | **ԿԱՏԱՐՈՂ**<br>ՄԱՐԻԱՄ ԱԲԳԱՐՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ Ա/Ձ<br>ք. Երևան, Կենտրոն Վրացյան փ. շենք 84/1 բն.34<br>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 19300293242700<br>ՀՎՀՀ 37493946<br>Ա/Ձ՝<br>Մ. Աբգարյան<br>(ստորագրություն) |

*Հավելված N 2*
*«16» դեկտեմբեր 2022 թ. կնքված*
*ԱԳՆ-ՄԱԾՁԲ-16/12 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գումարը ներկայացված է աճողական կարգով ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 79111200/2 | Ներկայացուցչական ծախսեր | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 50728557 | 50728557 |

| Պատվիրատու | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ արտաքին գործերի նախարարություն<br>Երևան 0010, Վ.Սարգսյան 3<br>ՀՎՀՀ 02527728<br>ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 90001109733<br>Գլխավոր քարտուղար<br>Բ. Սահակյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ՄԱՐԻԱՄ ԱԲԳԱՐՅԱՆ ՀՈՎՍԵՓԻ Ա/Ձ<br>ք. Երևան, Կենտրոն Վրացյան փ. շենք 84/1 բն.34<br>«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 19300293242700<br>ՀՎՀՀ 37493946<br>Ա/Ձ՝<br>Մ. Աբգարյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

*Հավելված 3*
*«  »  20 թ. կնքված*